


# ՍՏՈՒԳԻՐ ԴԻՏԵԼԻՔՆԵՐԴ

- 1. Ո՞ր դեպքում մեխանիկական աշխատանք չի կատարվում: (1 միավոր)**
  - 1) վերամբարձ կռունքը բարձրացնում է բեռը
  - 2) ավազով պարկը ճնշում է գետնին
  - 3) մարդը ֆիզիկական վարժություններ է կատարում
  - 4) ձեռքից բաց թողնված մարմինն ընկնում է գետնին
- 2. Ո՞րն է հզորության միավորը: (1 միավոր)**
  - 1) 1 Ն
  - 2) 1 Վտ
  - 3) 1 Ջ
  - 4) 1 կգմ
- 3. Ո՞րն է մեխանիկական աշխատանքի բանաձևը: (1 միավոր)**
  - 1)  $A = Fs$
  - 2)  $N = A/t$
  - 3)  $F = kx$
  - 4)  $F = mg$
- 4. Ո՞րն է պարզ մեխանիզմ: (1 միավոր)**
  - 1) լծակը
  - 2) ուժաչափը
  - 3) չափազլանը
  - 4) վայրկենաչափը
- 5. Ի՞նչ նպատակով է կիրառվում անշարժ ճախարակը: (1 միավոր)**
  - 1) ուժի մեջ շահելու համար
  - 2) ուժի ուղղությունը փոխելու համար
  - 3) ուժի ուղղությունը փոխելու և ուժը մեծացնելու համար
  - 4) ուժի ուղղությունը փոխելու և ուժը փոքրացնելու համար
- 6. Ո՞ր պարզ մեխանիզմն է շահում տալիս աշխատանքի մեջ: (1 միավոր)**
  - 1) թեք հարթություն
  - 2) անշարժ ճախարակ
  - 3) շարժական ճախարակ
  - 4) այդպիսի մեխանիզմ գոյություն չունի
- 7. Շինարարությունում աշխատող բանվորը պետք է բեռը բարձրացնի երկրորդ հարկի հարթակ: Դ-ա նա կարող է կատարել երեք եղանակով.**
  - ա) օգտագործել շարժական ճախարակ,
  - բ) օգտագործել անշարժ ճախարակ,
  - գ) օգտագործել բազմաճախարակ:**Ո՞ր եղանակը պետք է նա ընտրի, եթե ցանկանում է կիրառել ամենափոքր ուժը: (1 միավոր)**

8. Մեխանիզմներ օգտագործելիս կատարված ո՞ր աշխատանքն է ավելի մեծ. օգտակա՞րը, թե՞ լրիվը: Ինչո՞ւ: (2 միավոր)
9. Կոտայքի մարզում գտնվող Արգելի հիդրոէլեկտրակայանի հզորությունը 224 ՄՎտ է: Որքա՞ն աշխատանք են կատարում էլեկտրաէներգիա արտադրող գեներատորները 1 րոպեում: (2 միավոր)
10. Որքա՞ն է նկարում պատկերված  $F_2$  ուժը, եթե բեռը գտնվում է հավասարակշռության վիճակում: (2 միավոր)



11. 600 Ն կշռով բեռը շարժական ճախարակի օգնությամբ բարձրացրել են 15 մ՝ ճականի ազատ ծայրին գործադրելով 450 Ն ուժ: Որքա՞ն են այդ դեպքում կատարված օգտակար աշխատանքը, լրիվ աշխատանքները, ճախարակի ՕԳԳ-ն: (3 միավոր)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Միավորը	0-1	2-3	4-5	6-7	8-9	10-11	12-13	14	15	16
Գնահատականը	1	2	3	4	5	6	7	8	9	10